



## 244. ՏԵՐՏԵՐԻ ՎԱՐՁԸ

Մե տեղ մե հարսանիք ըլելւ շարսանիքի տերը կնալ, զակազ է տալ, որ հարեան կյուղի սազանդարը կյա, էս հարսանիքը անի: Ամառային օր ա, օգոստոս ամիսն ա: Սազանդարն էլ որոշում ա, որ. «Կկնամ, առաւոտը, էս մարդին սահարի փշեմ, որ մարդի ղոնաղները հավաքվեն»:

Իրեքը կալիս են գիշերը, ասում են.—Մութ ա, կնանք, էդ հարսանիքի տունը շենք ճարի: Էկէք, մարազը մտնենք, էս տարմանի վրա պառկենք, լուսանա, կզախք:

Մտնում են, տարմանի վրա պառկում են իրեք սազանդարը, նաղարա, զոռնան էլ իրանց մոտին:

Կիշերվա մի ժամանակ տըսնում են՝ մարագի տուռը պացված, մի տերտեր էկավ, տերտերի հետ էլ մի կեղեցիկ հարսը: Մի պողլա էլ լիքը ուտելու պան. պերին, պացին, մարագի մեջ լամպը կըպըցին, տրին: Հիմա, տերտերը փարաջան փաթաթել, ասել.

—Ա՛յ, մե թուրաջի փշող ըլնի, ինչ կո պար կլըկյամ:

Սազանդարն իմաց ի տալ, ասել.—Ադա՛, սաղլամիշ արա էդ թուրաջի եղանակը:

Սրանք որ տարմանի վրայից թուրաջի շն՛ն փշում, տերտեր տու տերտեր՝ սեղանն էլ թող, մի թայր արա, տուռը պաց, փախի:

էս սազանդարները քշերը քնեն, առաւոտը լուսանա, թե.—Կնալու ենք վարձը առնենք:

Լուսը պացցվել ա: Կյալիս են, տըսնում են՝ տերտերի տուռը  
 տիրօխնին նստած ա: Ասըմ ըն.—Տիրօխնի, պա տերտերը ո՞ւր ա:  
 Ասըմ ա.—Տերտերը կյուղի մեջ ա: Պա, ի՞նչ իք ասել:  
 Ասըմ ա.—Կործ ունենք տերտերի հետ:  
 Կնալի են, տեսնել՝ տերտերը նստել ա ժողովուրդի մոտ:  
 Ասըմ ա.—Տերտե՛ր, օրհնյա տեր:  
 Ասըմ ա.—Աստված օրհնի:  
 Ասըմ ա.—Տերտե՛ր, կարա՞ս մեր եղանակի հախը տաս:  
 Քե.—Ի՞նչ եղանակ:  
 Քե.—Որ կշերը զակազ տվիր թուրաչի, էն հախն ենք ու-  
 զում:

Քե.—Ա՛յ օրթնած, ի՞նչ թուրաչի:

Քե.—Ուզըմ ես պացատրե՞նք:

Քե.—Չէ՛, չէ՛, ճիշտ ա, ես եմ զակազ տվե, — ձեռը տանել,  
 փարաչայի շյուքից հանել տրանց փողը տալի:

Էդ սազանդարն ասըմ ա.—Կնոջն էլ եմ ճանաչել: Կնալու ենք  
 նրանից էլ առնենք: Կխայտառակենք սրանց:

Կնալի են, կնոջը ասելի են.—Կշերը, որ տերտերի հետ զա-  
 կազ տվիր էն թուրաչի եղանակը փշիլ, էն հախը տուր:

Էդ էլ առթու ի՞նչ անի, ստիպված, իրա անուսին կեղտ  
 չկյալու համար, տրանց հախը տալ:

Սազանդարներն էլ տեսնում են, որ շահել են՝ հա՛մ հարսա-  
 նիքից են օգուտ ունեցել, հա՛մ տերտերից:

